ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 1385-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

------ ---------- 2020, ------ - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 1385-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջները և հաշվի առնելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի «Պաշտոնական էլեկտրոնային փոստի տրամադրման, ինչպես նաև էլեկտրոնային փոստի հասցեի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման դեպքերը և կարգը սահմանելու մասին» N 1385-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման վերնագիրը «կարգը» բառից հետո լրացնել «, պետական տվյալների շտեմարաններում պահվող անձնական տվյալներին ծանոթանալու և պետական տեղեկատվական համակարգի միջոցով դրանց օգտագործման մասին տեղեկություն ստանալու կարգը» բառերով.

2) որոշման 1-ին կետը «համաձայն» բառից հետո լրացնել «N 1» բառերով.

3) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-րդ եւ 5.2-րդ

կետերով

«5.1. Սահմանել www.e-citizen.am պորտալի միջոցով պետական տվյալների շտեմարաններում պահվող անձնական տվյալներին ծանոթանալու և Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն որոշմամբ նախատեսված միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով (այսուհետ՝ պետական տեղեկատվական համակարգ կամ ՊՏՀ) դրանց օգտագործման մասին տեղեկություն ստանալու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

5.2. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկու ամսվա ընթացքում մշակել համապատասխան ՏՏ լուծումներ ու ապահովել www.e-citizen.am պորտալի միջոցով պետական տվյալների շտեմարաններում պահվող անձնական տվյալներին ծանոթանալու և ՊՏՀ միջոցով դրանց օգտագործման մասին տեղեկություն ստանալու հնարավորությունը:».

4) որոշման հավելվածի նախաբանը «Հավելված» բառից հետո լրացնել «N 1» բառերով.

5) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ N 2 հավելվածով

«**Հավելված N 2**

ՀՀ կառավարության 2015 թվականի

նոյեմբերի 12-ի N 1385-Ն որոշման

ԿԱՐԳ

WWW.E-CITIZEN.AM ՊՈՐՏԱԼԻ ՄԻՋՈՑՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում են www.e-citizen.am պորտալի միջոցով ՊՏՀ-ին ինտեգրված պետական տվյալների շտեմարաններում պահվող անձնական տվյալներին ծանոթանալու և ՊՏՀ միջոցով դրանց օգտագործման մասին տեղեկություն ստանալու հնարավորություն տվող բաժնի նկարագրությունը, դրա միջոցով հասանելի տեղեկությունները և տեղեկություն ստանալու եղանակը:

2. Սույն կարգով սահմանված գործիքակազմը ապահովվում է անձնական տվյալներ մշակողների բացառապես այն տեղեկատվական համակարգերի համար, որոնք ինտեգրված են Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն որոշմամբ նախատեսված միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգին (պետական տեղեկատվական համակարգ (ՊՏՀ)):
3. e-citizen.am պորտալի միջոցով պետական տվյալների շտեմարաններում պահվող անձնական տվյալներին ծանոթանալու և ՊՏՀ միջոցով դրանց օգտագործման մասին տեղեկություն ստանալու հնարավորությունն ապահովվում է www.e-citizen.am պորտալի հիմնական էջում՝ «Տվյալների պաշտպանություն» բաժնում՝ որպես առանձին ծառայություն:
4. «Տվյալների պաշտպանություն» ծառայությունը հասանելի է դառնում միայն խիստ նույնականացմամբ www.e-citizen.am պորտալ մուտք գործելու դեպքում:
5. Որոնման արդյունքնում www.e-citizen.am պորտալի միջոցով կարող են ստացվել պետական տվյալների շտեմարաններում պահվող անձնական տվյալների և ՊՏՀ միջոցով դրանց օգտագործման մասին հետևյալ տեղեկությունները՝

1) այն մարմինը, որը հայցել (ստացել) է անձնական տվյալը,

2) այն մարմինը, որը տրամադրել է անձնական տվյալը,

3) այն տվյալների բազան, որտեղից տրամադրվել է տվյալը,

4) տվյալները տրամադրելու օրը, ամիսը և տարին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: